ՎԵՐԿԱՑ ԵՎ ՔԱՅԼԻՐ

Բանալի համար. Յով. 5:1-9

1 Դրանից հետո հրեաների տօնն էր, և Հիսուս Երուսաղէմ ելավ: 2 Եւ Երուսաղէմում
Ոչխարաց դռան մօտ մի ավազան կա, որ Եբրայերէն Բեթհեզդա է **(House of Mercy.)**
կոչվում, որ հինգ սրահ ունի: 3 Նորանցում խիստ շատ հիվանդներ կային՝ պառկած.
կոյրեր, կաղեր, չորացածներ, [որ ջրի շարժուելուն էին սպասում: 4 Որովհետև Տիրոջ
հրեշտակը ժամանակ ժամանակ վայր էր գալիս այն ավազանը և ջուրը շարժում. և ջրի
շարժվելուց հետո նորա մէջ առաջ մտնողը բժշկվում էր՝ ինչ հիվանդութիւն էլ որ
ունենար:] 5 Եւ այնտեղ մի մարդ կար, որ երեսունութ տարի էր հիվանդութեան մէջ: 6
Երբոր Հիսուսը նորան պառկած տեսավ, և իմացավ, թէ արդէն շատ ժամանակից է, նորան
ասեց. Կամենո՞ւմ ես առողջ լինիլ: 7 Հիվանդը պատասխանեց նորան. Տէ՛ր, ոչ ոք չունեմ,
որ, երբ ջրերը շարժվում է՝ ինձ ավազանի մէջ իջեցնի. և մինչև որ ես գալիս եմ, ուրիշն
ինձանից առաջ իջնում է մէջը: 8 Հիսուսը նորան ասեց. Վե՛ր կաց, վերցրո՛ւ քո մահիճը և
ման եկ: 9 Եւ մարդն իսկույն առողջացավ, և վեր առավ իր մահիճը և ման էր գալիս. և
օրը շաբաթ էր:

Մատ. 9:6 - Բայց որ իմանաք, թէ մարդի Որդին իշխանութիւն ունի երկրիս վերայ մեղքեր թողելու. այն ժամանակ անդամալոյծին ասեց. Վեր կաց քո մահիճը վեր առ եւ գնա քո տունը։

Մար. 2:9,11 - 9 Ո՞րն է հեշտ. Անդամալոյծին ասել՝ Թողուած են քեզ քո մեղքերը, կամ ասել՝ Վեր կաց, քո մահիճն առ եւ ման եկ։ 11 Ասում եմ քեզ. Վեր կաց, քո մահիճն առ եւ գնա քո տունը։

Ղուկ. 5:23-24 - 23 Ո՞րն է աւելի հեշտ. Ասել՝ Մեղքերդ թողուած լինեն քեզ, թէ ասել՝ Վեր կաց եւ ման եկ։ 24 Բայց որ իմանաք, թէ մարդի Որդին իշխանութիւն ունի երկրի վերայ մեղքեր թողելու. անդամալոյծին ասեց. Քեզ եմ ասում, Վեր կաց եւ մահիճդ առ, եւ գնա քո տունը։

Մար. 5:41 - Եւ երեխայի ձեռքիցը բռնելով ասեց նորան. Տալիթա կումի. Որ թարգմանվում է, Ով աղջիկ, (քեզ եմ ասում,) վեր կաց։

Ղուկ. 8:54 - 54 Իսկ նա ամենքին դուրս հանեց, եւ նորա ձեռքիցը բռնելով՝ կանչեց եւ ասեց. Աղջիկ, վեր կաց.

Մար. 10:49 - 49 Եւ Յիսուսը կանգնեց եւ ասեց, որ նորան կանչեն. Եւ կոյրին կանչեցին՝ եւ ասեցին նորան. Քաջ եղիր, վեր կաց, քեզ կանչում է։

Գործ. 3:6 - 6 Պետրոսն էլ ասեց. Արծաթ եւ ոսկի չ՚ունիմ. Բայց ինչ որ ունիմ, այն քեզ կ՚տամ. Յիսուս Քրիստոսի՝ Նազովրեցու անունովը վեր կաց եւ ման եկ։